Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
օգոստոսի 13-ի N 974 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրից ակնկալվող արդյունքներն են բուսական աշխարհի օբյեկտների հաշվառման համակարգի բարելավումն ու բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և կայուն օգտագործման համար տեղեկատվական հենքի ստեղծումը։

2. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում բուսական աշխարհի պետական հաշվառումը (այսուհետ՝ հաշվառում) ապահովում է վայրի բույսերի տեսակների մասին տեղեկատվության ստացումը, որն անհրաժեշտ է բուսական աշխարհի պետական կադաստրի վարման և մոնիթորինգի իրականացման համար։

3. Հաշվառումն իրականացվում է տվյալ բույսի տեսակի համար գիտականորեն հիմնավորված մեթոդների հիման վրա և արդյունքում ներառում է տեղեկատվություն տեսակի քանակական և որակական փոփոխությունների զարգացման մասին, իսկ հնարավորության սահմաններում ապահովում է նաև տեղեկատվություն տեսակի տարիքաչափսային կառուցվածքի մասին։

II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի կայուն կառավարման, պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործման ու պահպանության ապահովումն է:

5. Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքի բուսական աշխարհի (բարձրակարգ ու ստորակարգ բույսեր և սնկեր) և նրանց աճելավայրերի պահպանությանն ուղղված ազգային քաղաքականության և դրանց կայուն կառավարմանը նպատակաուղղված գործողությունների իրականացմանը նպաստելը.

2) Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում օգտագործման ենթակա բուսատեսակների չափաքանակների որոշումը և գիտականորեն հիմնավորումը՝ ելնելով ժամանակակից տվյալներից և բնական ռեսուրսների կայուն օգտագործման սկզբունքներից,

3) բնակչության կողմից առավել օգտագործվող և տարածված օգտակար բույսերի պաշարների գնահատումը և բնակչությանն իրազեկման ապահովումը.

4) ազգային և միջազգային համագործակցությանը խթանելը.

5) ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսական ներդրումներին նպաստելը.

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ բուսական աշխարհի պահպանությանը և կայուն կառավարմանը նպաստող այլ գործողություններ իրականացնելը:

III. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. Բուսական աշխարհի հաշվառման ծրագրերն իրականացնում են այն սուբյեկտները, որոնք մրցույթում հաղթող են ճանաչվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Հաշվառման իրականացման փուլերն են՝ տվյալների հավաքագրումը, գրանցումը և տրամադրումը բուսական աշխարհի պետական կադաստրը վարող և մոնիթորինգ իրականացնող պետական կառավարման լիազոր մարմնին:

8. Տվյալների հավաքագրումը ներառում է ելակետային տեղեկատվության հավաքը (հերբարիումային նյութեր, գրականության տվյալներ և այլն) և դաշտային հետազոտություն-ները (բուսատեսակների ներկա վիճակի, տարածվածության, աճելավայրերի քանակական և որակական փոփոխությունների ուսումնասիրություն, հերբարիումային նյութերի հավաք, լրացում և այլն):

9. Տվյալները գրանցվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավա-րության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Բուսական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին» N 1440-Ն որոշման հավելվածի 10-րդ, 11-րդ և 14-րդ կետերի:

10. Տվյալները տրամադրվում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառա-վարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Բուսական աշխարհի պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին» N 1440-Ն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների տրամադրման կարգի:

IV. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

11. Բուսական աշխարհի պետական հաշվառման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ միջոցները տրամադրվում են օրենքով չարգելված միջոցների հաշվին ։

12. Ոլորտի խնդիրների լուծման նպատակով կարող են ներգրավվել նաև միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցները՝ դրանք նպատակաուղղելով ոլորտի զարգացմանն ուղղված առաջնահերթ խնդիրների լուծմանը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
օգոստոսի 13-ի N 974 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Ց Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման պատասխանատուն	ժամկետը	Ակնկալվող արդյունքները	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ բուսական աշխարհի (բարձրակարգ, ստորակարգ բույսեր և սնկեր) ներկա վիճակի, տարածվածության ուսումնասիրություն՝ ըստ ֆլորիստիկ շրջանների՝ 1) բուսատեսակների մասին ելակետային տեղեկատվության հավաք. 2) բուսատեսակների և համակեցությունների, դրանց աճելավայրերի քանակական և որակական փոփոխությունները բացահայտելու նպատակով դաշտային ուսումնասիրությունների իրականացում ՀՀ ամբողջ տարածքում. 3) արդյունագործական, սոցիալական նպատակներով օգտագործվող բուսատեսակների պաշարների հաշվառման և գնահատման աշխատանքների իրականացում ՀՀ ամբողջ տարածքում. 4) արդյունագործական, սոցիալական նպատակներով օգտագործվող բուսատեսակների տարածման արեալների քարտեզագրում ըստ տեսակների։	ՀՀ բնապահպանության նախարարություն	2010-2020 թթ.	ՀՀ բուսական աշխարհի ներկա վիճակի նկարագիր, կենսաբազմազանության և կենսառեսուրսների գնահատում	օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.	Տեղեկատվության մշակում, վերլուծություն, ամփոփում՝ 1) ստացված ելակետային տեղեկատվության մշակում. 2) դաշտային ուսումնասիրությունների արդյունքների մշակում. 3) ամբողջական տեղեկատվության համեմատական	ՀՀ բնապահպանության նախարարություն	2010-2020 թթ.	ՀՀ բուսական աշխարհի վիճակի մասին կանոնակարգված տեղեկատվություն և դրա հիման վրա բուսական պաշար-	օրենքով չարգելված միջոցների հաշվին

1	2	3	4	5	6
	վերլուծություն և ամփոփում. 4) տեղեկատվական բազայի ստեղծում			ների օգտագործման գիտականորեն հիմնա-վորված թույլատրելի չափաքանակներ	
3.	Բուսական աշխարհի տեսակային կազմի ճշգրտում՝ 1) բարձրակարգ, ստորակարգ բուսատեսակների և սնկերի տեսակների ցուցակների կազմում. 2) բուսատեսակների արեալների քարտեզի կազմում. 3) արդյունագործական, սոցիալական նպատակներով օգտագործվող բույսերի լուսանկարների, տեսանյութերի պատրաստում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2012-2015 թթ.	բուսական աշխարհի ճշգրտված տեսակային կազմի առկայություն	օրենքով չարգելված միջոցների հաշվին
4.	Հայաստանի Հանրապետությունում հանդիպող բուսական տեսակների մասին առկա տեղեկատվության թվայնացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2016-2020 թթ.	տեղեկատվական բազայի առկայություն	օրենքով չարգելված միջոցների հաշվին
5.	Հայաստանի Հանրապետությունում հանդիպող բուսական տեսակների վերաբերյալ հանրամատչելի գրքերի, ֆոտոալբոմների, ուղեցույցների պատրաստում, լուսաբանումներ պարբերական մամուլում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018-2020 թթ.	Հայաստանի Հանրա-պետությունում հանդիպող բուսա-տեսակների մասին հանրամատչելի տեղեկատվության առկայություն	օրենքով չարգելված միջոցների հաշվին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ